այլն,—ուրիշ շատ այդ տեսակի ցնդաբանութիւններ չեզ ինչ. «Մեղուի» պ. խմբագիր. «Մշակը» տղէտ կամ խելացի մինելը մենք լաւ գիտենք, նա մեզ բացի օգուտը մինչեւ այժմ վնաս տուած չէ: Ամիրխանեանցը որսում է լուսաւորչականներին հարիւր անգամ տաւղիւ, բաւական է. Քող զզոյշ կենան լուսաւորչականները եթէ հիմնաւոր հաւատ ունեն, եթէ կարող են. մեր ինչ գործն. է. ամեն մարդ խելք ունի, եւ իրեն խելքով կարող է իր հոգու փրկութեան վրա մտածել, առանց մեր եւ իմ ասելուն: Մէլիքզադէն այսպէս է, այնպէս է, այդ էլ մեր գործը չէ. նա մեզ պաշտելի է. մենք գիտենք ով է նա, եւ ինչ արժանաւորութիւն ունեն նորա գրածները: Դուք փոխանակ հայհոյանքներ Քափելու նրա դլխին, ազնուապէս վեր առէք գրիչը, եւ եթէ շնորհ ունէք, ընեցէք նրա գրուածները, կրիտիկայի ենթարկեցէք, եւ ցոյց տուէք բոլորին նրա սխալ գաղափարները, եթէ կան: Ա.յն ժամանակ մի քանի նման կը լինի. իսկ չար ոգով անձնականութեան եւ պատուի կռիւ, սոքա նորա ոտքից քաշել,—գրսնք ազնիւ մարդկանց գործեր չեն:

Իսկ դուք, աշխատասէր „Մշակ", մի փոփոխ սամիտ իմաստակների վայրահաւանութիւններից, գործեցէք, ինչպէս որ սկսած սկզբից գործում էր մինչեւ ցայժմ, եւ եթէ ներկան չէ հաճանում, գոնէ ապագայ սերունդը երախտապարտ սրտով կը ճանաչէ ձեզ իբրեւ պաշտպան ազգի եւ հայրենիքի:

Հայ—լուսաւորչական

ԸՐՏՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿՆ

—

Հանդիսիս խմբագրութիւնն առաջին օրէն իր ուշադրութեան առարկայ ըրած է մեր ազգային ներքին վիճակը, կատարեալապէս համոզուած լինելով թէ նորա բարեքաջութիւն անհրաժեշտ է, ըստ որում՝ ինչպէս որ առաւարան ընկերութիւն մ՝առանց լաւ պայմաններու եւ պայմանագիր կողմերն առանց զայնս ճշդիւ եւ հաւատարմութեամբ գործադրելու չը կրնար իր նպատակին հասնել, այն է, շահիլ եւ օր ըստ օրէ զարդանալ եւ առաջդիմել, այսպէս ալ մեր ազգն իբրեւ ընկերութիւն ենթադրելով չը կը-նար իր ազգային շահուցն ու իրաւանցն հսկել եւ հետեւապէս զարդանալ եւ յառաջդիմել, եթէ իւր ներքին վիճակը բարեքաջու մասին անտարբեր գտնուի:

Երբ, քանի որ ազգ մը կենդանի է, կապրի եւ իր լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, միտուեներն ու բաղձանքներն ունի, բնական է որ իր ուրոյն շահերն եւ իրաւունքներն ալ ունի:

Մեր ազգն ալ ունի իւր շահերն ու իրաւունքներն, որոնց անվնաս պահպանութիւնն հարիւր իր ներքին վիճակէն կախում ունի:

Հայ ազգն այժմ չունի թէեւ քաղաքական անկախութիւն, ունի սակայն ներքին անկախութիւն, զոր վայելած է եւ կը վայելէ դարերէ ի վեր. վասն դի ունի իր անկախ եկեղեցին, որ քրիստոնեայ ազատ եկեղեցին է, որոյ շնորհիւ Հայը կրցած է պահպանել իւր ազգայնութիւնն իր քաղաքական անկախութենէն եւսեւ, որովհետեւ Հայաստանեայց եկեղեցին անկորուստ պահպանեց Հայ լեզուն, որ ամբողջովին կը պարունակէ իր մէջ մեր ազգային կեանքը, պատմութիւնը, սովորութիւններն եւ ամենայն ինչ՝ որ Հայուն է եւ Հայուն կը վերաբերի:

Պատմական անժխտելի իրողութիւններ են սոքա, զորս հերքելն անկարելի է, ինչպէս անկարելի է հերքել նաեւ այն ազատ գրութիւնն, որ կատած է Ազգն իր Եկեղեցւոյն հետ ոչ իբրեւ հպատակ՝ այլ իբրեւ տէր:

Հայ կեան ապացուցանելու հարկ չը կայ, որովհետեւ պատմութիւնը նուիրագործած է զայս, ըստ որում Հայաստանեայց Եկեղեցին Ամենազգական Եկեղեցի է եւ Կաթողիկոսն ալ նորա աւանդապահն է, որ բացարձակ կամք չունի երբէք:

Մեր ազգային եկեղեցւոյ բացարձակ տէրը միայն Ազգն է:

Ուստի Ազգը իրաւունք ունի իր ընտրած կաթողիկոսն միշտ համար պահանջելու եւ գիտնալու թէ մինչեւ հիմա ինչ ըրած է, ինչ կընէ եւ ինչ պիտի ընէ:

Հայ բանն այնքան հարկաւոր է, զոր չը կատարելն ազգային շահուց եւ իրաւանց դէմ պարզապէս մեղանչել կնշանագրէ, որովհետեւ Էջմիածնայ արդի վիճակն եւ Ս. Կաթողիկոսին այժմու դիրքն ու կացութիւնը մեծ կարեւորութիւն ունի գիտնալ, ուղղել եւ Ազգային ոգւոյ յարմարցնել որ շատ հարկաւոր է:

Հաւասարիկ ուշադրութեան արժանի ներքին խնդիր մը, զոր միայն «Մանդատ»ը չը հականար կամ չուզեր հասկնալ, որովհետեւ իր շահերը դժբաղդաբար խիստ տարբեր են մեր ազգային բուն շահերէն, ըստ որում երբ կը կարծնէ մարդ իր պաղարիւնութիւնն՝ ալ խօսողն ինք չէ, այլ կիրքը:

Ուր կիրքը կը խօսի, հոն բանավարութիւնը գործ չունի, հետեւաբար այսպիսի պարագայի մէջ վիճաբանութիւն անօգուտ է:

Գոհ ենք որ Ս. Փափագեան Էֆէնտի Ազգային ժողովոյ վերջնթեր նստին մասոյց այն կարեւոր առաջարկութիւնն, որով փափաք կը յայտնէր Ս. Կաթողիկոսին հաշտարար քառամեայ պաշտօնավարութեան հաշիւը խնդրել, նորա դիրքն ու կացութիւնն հասկանալ եւ փոխադարձաբար ազգային ընդհանուր բաղձանքները նմա ներկայացնել:

Ըստ աւելորդ է բացատրել թէ Թիւրքահայը, Պարսկահայը, Հնդկահայն եւ Ռուսահայն հաւատարմապէս կը փափաքի այս սահմանն հաւատարմապէս կը փափաքի այս սահմանն հաւատարմապէս կը դիմեն, որովհետեւ գանդատանաց և դիմումներու ձայներն ամենուրեք ընդհանրացած են և ահա համարառութիւնը միայն կրնայ անախորժ տպաւորութեանց հետքը ջնջել:

Պարզէն յուսալի է թէ Ազգային ժողովն ալ յիշեալ ամենակարեւոր խնդիրը խորին ուշադրութեան առնու, յարգելով և պաշտպանելով միշտ ազատ վիճաբանութիւնն, որ հերետիկոսական ժողովոյ հոգին է:

(Լոյս)

ԱԼԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

—

Ակուտարիից „Polit Corresp" լրագրին գրում են հոկտեմբերի 17-ից՝ Մի քանի ժամանակ է ինչ մեծ մզկիթի բազի մէջ ալբանական ժողովրդական ժողովներ են լինում, որոնց ժամանակ մասամբ ինքը Բիզա-փաշա, մասամբ Օսմանի-փաշա և Խօջա-փաշա և նրա բարեկամները աշխատում են հանգստացնել ալբանցիներին: Երբէք դարձեալ մի ժողով կար, որի ժամանակ Խօջա-փաշա աշխատում էր ցոյց տալ, որ ինքը արժանի է սուլթանի հաւատարմութեանը: Նա աշխատում էր համոզել իր լսողներին, որ անհրաժեշտ է Դուլցինիոն խաղաղ ճանապարհով յանձնել Ձերնօգորիային: Թիւրքաց կայսրութիւնը, ասաց նա, թշնամութեան մէջ է գտնվում Լ. Դուլցը մի մեծ պատերազմ սկսելու համար ոչ դրամական միջոցներ ունի և ոչ դաշնակիցներ: Նա ասիրվեցաւ կը լինէր պատերազմել ոչ թէ միայն Ձերնօգորիայի հետ, այլ բոլոր պետութիւնների հետ, որոնք հակառակ են նրան: Խաղաղութիւնը պահպանելով, սուլթանը իր ժողովրդի շահերի հաւատարիմ կը վարվի: Ալբանցիների ընդդիմադրութիւնը անօգուտ կը լինի և մի և նոյն ժամանակ վտանգաւոր պետութեան համար, որի համար խաղաղութիւնը անհրաժեշտ է: Խօջա-փաշա միշտ հաւատարմութեամբ ծառայել պետութեանը և ժողովրդին և եթէ այժմ նա խորհուրդ է տալիս գիջումներ անել, դրա պատճառը Թիւրքիայի և Թիւրք ժողովրդի բարօրութիւնն է: Նրա ճառը իր լսողների վրա միատեսակ տպաւորութիւն չը գործեց: Մի քանիսը խանարհվում էին իրանց վիճակի առաջ հառաչելով և արտասուքներ թափելով, իսկ միւսները ընդդիմադրում էին և անբարեկամութիւն էին ցոյց տալիս: Մի քանի ձայներ յանդիմանում էին կառավարութեանը: ,,Թող Լ. Դուլը չը խառնվի մեր գործերի մէջ, ասում էին նրանք, եթէ նա մեզ համար ոչինչ չէ կարող անել, թող չէզոք մնայ: Մենք ինքնապաշպանութեան իրաւունք ենք ընդունում, մենք բաւական միջոցներ ունենք մեր գործը շարունակելու համար: Եթէ այդ մեզ կռուաւս կը պատճառի, այնուամենայնիւ մենք ոչինչ չենք կորցնի, որովհետեւ այժմ էլ մեզ աղքատութիւն են խոստանում: Խօջա-փաշա նորից սկսեց համոզել ներկայ եղողներին հնազանդվել անփախչելի իրողութեանը: Ժողովը ցրվեցաւ լռութեամբ և տխուր տրամադրված: Դուլցինիոյ մէջ այդ քաղաքը պաշտպանելու համար գտնված ալբանցիների ոգեորութիւնը անցնում է: Մի կողմից նրանք յուսահատված են, որովհետեւ ալբանական նշանաւոր առաջնորդները մի օրվայ մէջ, միաժամանակ վախճանվեցան, միւս կողմից Լ. Դրան ընթացքը կարում է նրանց յոյսը Դուլցինիոն պահպանելու վերաբերութեամբ: Հասատատ աղբիւրներից հաղորդում են, որ ալբանցիները հարիւրներով թողին իրանց բռնած դիրքերը և յուսահատված վերադարձան իրանց լեռնային նախկին բնակարանները: Հայտնի ալբանական գործող մասնաժողովը զրեթէ բոլորովին արձակված է: Հրամանցիները զրամական միջոցներ չունեն, սուլթանը այլ ևս նրանց ոչինչ չէ ուղարկում: Թիւրք-փաշայի ազդեցութիւնը հեռաւոր մեծամասնում է: Դուլցինիոի մէջ մի կողմից պակասում է ալբանցիների թիւը, իսկ միւս կողմից աւելանում է Թիւրք կանոնաւոր զորքերի թիւը: Կարելի է դուշակել, որ Դուլցինիոի հարցը բարկացաղ վախճան կունենայ: Այժմ ամեն բան կախված է այն դաշնագրութենից, որ կը կապէ Բիզա-փաշա չերնօգորիական կառավարութեան հետ: Իսկապէս գործը առանց դժուարութիւնների չի վերջանայ: Թիւրքաց դիպլոմատիայի յատկանիշ կողմն է գիջումները քայլ առ քայլ անել:

ԳՕԼԳԱԹԱ

—

Ռուշչուկից „Polit. Corresp." լրագրին գրում են հոկտեմբերի 23-ից՝ Իշխան Ալեքսանդր յայտնեց, որ անհրաժեշտ են այն բոլոր լուրերը, որոնք հաղորդում են, իբրեւ թէ Գոլգաթան ձգտում է միացնել իր հետ Հրեաստանը: Նրա կառավարութիւնը, ինչպէս մինչեւ այժմ, նոյնպէս էլ այսուհետեւ կաշխատի հեռու լինել պատերազմական դիտաւորութիւններից և իր բոլոր ուշադրութիւնը կը դարձնի ներքին գործերի վրա: Նրա կառավարութեան նպատակն է երկրի մէջ օրինաւոր կարգ ու կանոն մտցնել և բարեկամական հարաբերական կեանքի բոլոր պայմանները: Դա մեծ նշանակութիւն է տալիս իր ժողովրդի բարոյական կողմերի ազնուացնելուն և ցանկանում է բարեխիղճ ոստիկանի թիւրքերի դրութիւնը, որոնց իշխանը սիրեց այն ժամանակից, երբ ծանոթացաւ նրանց գեղեցիկ յատկութիւնների հետ: Իշխանի կարծիքով Բրեւերնան-Ռումելիայի միանալը Ռոլգարիայի հետ ժամանակի խնդիր է: Այդ գործը ժամանակով կատարվելու է ինքն ըստ ինքեան, առանց իշխանի միջամտութեան: Նոյն կարծիքի է և զինուորական մինիստր գենեռալ Էյնրօտ: Այդ պատճառով ոչ ռուսաց և ոչ բոլգարական կառավարութիւնները մտադիր չեն շտապեցնել անցքերի ընթացքը արհեստական միջոցներով: Գիրանսիացիները, նկատում է գենեռալը, տաս տարի շարունակ իրանց զօրքերի օգնութեամբ իրաւացիներին հեռու էին պահում Հաուից, բայց վերջը այնու ամենայնիւ յաւիտենական քաղաքը իտալացիների մայրաքաղաքը դարձաւ: Ի հարկէ Ռոլգարիան միշտ հանգիստ չի լինի: Երբեմն երբեմն գաղտի յարձակմունքներ կը պատահեն Ռումելիայի վրա, բայց այդ յարձակմունքները չեն պաշտպանվի ոչ Սոֆիայի եւ ոչ Պետերբուրգի մէջ: Գենեռալ Էյնրօտ 45 տարեկան լաւ կրթված և համակրական անձնաւորութիւն է: Նա զօրքերին շատ լաւ կազմակերպում է և մի և նոյն ժամանակ բաւականանում է փոքր միջոցներով: Նրա խնայողութիւնը մեծ օգուտներ տուաց բոլգարական բիւդժետին: Ռոլգարիան կարող է պարծենալ իր զինուորական մինիստրով:

«ՄՇԱԿԻ» ԼԵՒՈՒՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 12 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր., երկրորդ 217 ր. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 35 կ., ոսկի 8 ր. 12 կ: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24½ պէնս, ուսաց 100 ռուբլ Ամստրդամի վրա արժէ 200 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 256 ֆր.:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Հայոց առաջարան 8 ժամին ամրոցի մէջ կատարվեցաւ Ավետիսվանի և Պրեմիրիով պետական յանցաւորների մահուան պատիժը: Դիմաները կէս ժամ ճացին կախաղանի վրա:

ԹՈՒՐՔԱՍՏԱՆ, 3 նոյեմբերի: Սալոնիկի մեծ կանոնաւոր քիւրդերը հնազանդվեցին Դիբրեի առաջնորդ Հասան-աղա բռնվեցաւ Ուրուզայի մեծ: Թայսուբ-փաշա գրաւեց Հրադուլիսի դիրքը Ուրուզայի մեծ և դրանից յետոյ շէյխը յետ է քաշվում 15 մղոն տարածութեան վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի: Կառավարական հաղորդութիւն. ռուսաց շատ լրագիրների մէջ պատասխանեան լրագիրներից քաղուած լուրեր տպվեցան Ալիէնայի ռուսաց դեսպանի և պարսկական նորերի մէջ եղած բանակցութիւնների մասին: Այդ լուրերից բոլորն էլ, որոնք վերաբերում են քննվող առարկաներին, անհիմն են: Ներկայ բանակցութիւնները շարունակվում էին մի քանի ամիսներ և մինչեւ Լոնդոնի հեռանալը Ալիէնայից փերջացան սկզբնական համաձայնութեամբ, որ վերաբերում է բացասական կարծիքներ մեր թեմերի եկեղեցական կացմակերպութեանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՈՒԹԻՆՆ